Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
պարոն Ա.Խաչատրյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի օգոստոսի 26 ից սեպտեմբերի 3-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ Բոն քաղաքում կատարած գործուղման վերաբերյալ:

**ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու՝ Լևոն Աղասյան

**ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ /ԺԱՄԿԵՏ**

2023թ.-ի օգոստոսի 26 ից սեպտեմբեռի 3 -ը Գերմանիա, Բոն

**ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակ (IPBES) քարտուղարություն:

**ՆՊԱՏԱԿԸ /միջոցառման անվանումը/**

Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES) կողմերի 10րդ հանդիպում:

Հանդիպումը կազմակերպվել էր Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES կողմից:

Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակը (IPBES հանդիսանում է անկախ միջկառավարական մարմին: Այն հիմնադրվել է Պանամա քաղաքում՝ 2012 թվականի ապրիլի 21-ին, 94 պետությունների Կառավարությունների կողմից: 2023 թվականի դրությամբ ունի աշխարհի 143 անդա: Կառույցի հիմնական նպատակն է ամրապնդել գիտական և քաղաքական փոխհարաբերությունները՝ կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման, մարդու երկարաժամկետ բարեկեցության և կայուն զարգացման համար:

Հանդիպման մասնակցության համար գրանցվել էին 1074 մասնակից 143 պետություններից:

**ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Հանդիպումների և սեմինարների ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները և հարցերը.

IPBES-ի մինչև 2030 թվականը աշխատանքային ծրագիրը, որը նպատակ ունի առաջ մղել IPBES-ի ընդհանուր նպատակին հասնելը, որն է՝ ամրապնդել կապը գիտության և քաղաքականության միջև ՝ կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման, մարդու երկարաժամկետ բարեկեցության համար:

Կապված համաշխարհային ռազմավարության գործողություններից, որը հաստատվել է 2023 թվականին Կանադայի, Մոնրեալ քաղաքում, IPBES-ին մանդատ է տրվել աջակցել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերին գիտական տեղեկատվության տրամադրման հարցում:

1. Հասկանալ կենսաբազմազանության կարևորությունը 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգին հասնելու համար.

2. Հասկանալ կենսաբազմազանության կորստի հիմքում ընկած պատճառները և փոխակերպիչ փոփոխությունների որոշիչները և 2050 թվականի Կենսաբազմազանության տեսլականին հասնելու տարբերակները.

3. Բիզնեսի ազդեցության և կախվածության չափումը կենսաբազմազանությունից և բնության ներդրումներից մարդկանց համար.

4. Ամրապնդել IPBES-ի ի կարողությունները և սերտորեն համագործակցել Կլիմայի փոփոխության միջգերատեսչական հանձնաժողովի- Intergovernmental Panel on Climate Change (IPCC) – ի հետ:

Ինչպես նաև քննարկվեցին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում կարողությունների զարգացման կարիքների և հնարավորությունների գնահատման մեխանիզմները, որոնք թույլ կտան IPBES-ի ընթացակարգում ներգրաված երկրների և շահագրգիռ կողմերի լիարժեք մասնակցությունը:
Հայաստանը ընդգրկված է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի խմբում 28 երկներից բաղկացած:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հաստատվեց ինվազիվ օտարածին տեսակների թեմատիկ գնահատումը որոշումներ կայացնողների համար: Որի պատրաստման աշխատանքներին մասնակցել է 86 փորձագետներ 49 տարբեր պետություններից: Այն հիմնված է ավելի քան 13000 հղումների վրա:
Մոտավոր 37.000 հաստատված օտարածին տեսակներ են ներմուծվել մարդկային գործունեության արդյունքում երկրի բոլոր շրջաններում և բիոմներում, որոնցից 3500 տեսակը բացասական ազդեծություն են ունենում բնության, բնության ներդրումների մարդկանց եւ մարդկանց կյանքի որակի վրա: Հաստատվել է որ, աշխարհում վայրի կենդանիների անհետացման 60 տոկոս դեպքերը ուղիղ կապված են ինվազիվ տեսակների ազդեցությունից:

Արձանագրվեց, որ աղքատությունը և սոցիլական վիճակի վատթարացումը մեծացնում է ծանրաբեռնվածության ազդեցության աստիճանը շրջակա միջավայրի վրա:
Խիստ կարևորվեց տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման անհրաժեշտությունը բնապահպանական խնդիրների լուծման ոլորտում:
Նոր Ազգային ռազմավարությունների և գործողությունների պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել <<Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտա-քաղաքական պլատֆորմ>>-ի (IPBES) շրջանակներում մշակված և ընդունված Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ զեկույցները: Մասնավորապես նոր հաստատված օտարածին տեսակների թեմատիկ գնահատումը, ինվազիվ տեսակների ազդեցությունը և նրանց դեմ պայքարի միջոցառումները:

**Ելույթներ**

Ինչպես խմբային, այնպես էլ պլենար տարբեր քննարկումների ժամանակ իմ կողմից ներկայացվել ՀՀ կենսաբազմազանության պահպանության վերաբորող խնդիրները:

Բարձրաձայնվել է ֆինանսական աջակցության հարցերը նպատակներին հասնելու համար որպես զարգացող երկիր:

**Առանձնազրույցներ և ձեռք բերված արդյունքներ:**
Որպես IPBES-ի Արևելյան Եվրոպայի եվ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանից Բյուրոյի անդամ (IPBES Bureau  member)՝ Շրջակա միջավայրի նախկին նախարար Environment Group-ի հիմնադիր և գործադիր տնօրեն, էկոհամակարգային ծառայությունների միջազգային փորձագետ Էրիկ Գրիգորյանը, 2023 թվականին իմ կողմից առաջադրվել էր որպես Բյուրոյի անդամի թեկնածու: Թեկնածություններ էին առաջադրվել ՀՀ-ից, Բոսնիա և Հերցեգովինայից, Թուրքիայից և Չեխիայից: Յուրքանչյուր տարածաշրջանից պետք է հաստատվեին երկու թեկնածու:
Տարածաշրջանային հանդիպման ընթացքում  որտեղ մասնակցում է 28 պետություն հաստատվեց նաև Էրիկ Գրիգորյանը թեկնածությունը, որպես IPBES Բյուրոյի անդամ:
Այսպիսով Արևելյան Եվրոպայի եվ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանից հաստատվեցին Էրիկ Գրիգորյանի, Հայաստանի Հանրապետություն և Բոսնիա և Հերցեգովինայից, Համիդ Գուստովիչի թեկնածությունները որպէ IPBES-ի Բյուրոյի անդամներ: Թուրքիայի և Չեխիայի ներկայացուցիչները հաստատվեցին որպես IPBES ալտերնատիվ բյութոյի անդամնր:

Կից ներկայացնում եմ IPBES-ի կողմից պատրաստված ինվազիվ օտարածին տեսակների թեմատիկ գնահատման հաշվետվությունը:

Շրջակա միջավայրի նախարարության
իրավախորհրդատու՝ Լևոն Աղասյան